

**«ՃԱՐՊԱԿԱԼՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

**2023 թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ)**

**ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**

- Գրություն՝ 20 .05-03.06
- Թիրախային լսարան՝ էնդոկրինոլոգներ, սրտաբաններ, թերապևտներ, գաստրոէնտերոլոգներ, մանկաբույժներ, կլինիկական հոգեբաններ, դիետոլոգներ և նուտրիցիոլոգներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-30 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄՁ 20 տեսական և 10 գործնական կրեդիտ. դասընթացավար Վարդանուշ Պետրոսյանին՝ ՇՄՁ 20 տեսական և 10 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 010235310

<b>Շաբաթ 1</b>		
<b>Օր 1</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b>  <b>Ճարպակալումը որպես քրոնիկ հիվանդություն</b>                      Ճարպակալումը որպես քրոնիկ հիվանդություն, տարածվածությունը և ազդեցությունը հանրային առողջության վրա:  <b>Սքրինինգ և ախտորոշում</b>                      Ճարպակալման սքրինինգի և ախտորոշման մեթոդները, ներառյալ BMI (մարմնի զանգվածի ինդեքս) հաշվարկները և այլ գնահատման համակարգեր:  <b>Ճարպակալման հետ կապված առողջական ռիսկերի գնահատումը</b>                      Ճարպակալման հետ կապված առողջական ռիսկերի ու բարդությունների բացահայտումն ու գնահատումը</p>	Վարդանուշ Պետրոսյան
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b>                      Մարմնի զանգվածի ինդեքսի (BMI) հաշվարկներ:                      Գոտկատեղի շրջագծի չափում</p>	Վարդանուշ Պետրոսյան
<b>Օր 2</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b>  <b>Էթիոպաթոգենեզ (մաս 1)</b></p>	Վարդանուշ Պետրոսյան

	<p><b>Գենետիկա և Ժառանգականություն:</b> Գենետիկայի դերը ճարպակալման առաջացման մեջ <b>Էներգետիկ հաշվեկշիռ. ճարպային հյուսվածքի կենսաբանություն</b> Էներգետիկ հաշվեկշիռ: Ախորժակի, հագեցվածության և նյութափոխանակության կարգավորումը՝ այդ հավասարակշռությունը պահպանելու համար: Ճարպային հյուսվածքի տարբեր տեսակների դերը <b>Շրջակա միջավայրի գործոններ</b> «Գիրաձին» միջավայր: Ժամանակակից միջավայրի ազդեցությունը ավելորդ քաշի և ճարպակալման առաջացման և տարածվածության վրա</p>	
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b> Էներգետիկ հաշվեկշռի հաշվարկ: Գիրաձին միջավայրի վերլուծություն:</p>	Վարդանուշ Պետրոսյան
<b>Օր 3</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b> <b>Էթիոպաթոգենեզ (մաս 2)</b> <b>Հորմոնալ կարգավորում</b> Ախորժակի և նյութափոխանակության վրա ազդող հորմոնալ գործոններ, ներառյալ՝ լեպտին, գրելին, ինսուլին և կորտիզոլ: <b>Նյարդաբանական գործոններ</b> Գլխուղեղի դերը սննդային վարքագիծը կարգավորելու մեջ: Սննդային կախվածությունների մեխանիզմը: Քնի խանգարումների կարևորությունը <b>Աղիքային միկրոբիոտա</b> Աղիքային միկրոբիոտայի շուրջ հետազոտությունների զարգացող ոլորտը: Աղիքային բակտերիաների ազդեցությունը նյութափոխանակության և սննդամթերքի մարսողության վրա</p>	Վարդանուշ Պետրոսյան
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b> Սննդի պլանավորման և պատրաստման տեխնոլոգիա</p>	Վարդանուշ Պետրոսյան
<b>Օր 4</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b> <b>Էթիոպաթոգենեզ (մաս 3)</b> <b>Մետաբոլիկ համախտանիշ</b> <b>Բորբոքում</b> Ճարպակալման և բորբոքման միջև կապը: <b>Ինսուլինակայունություն</b> Ճարպակալման և ինսուլինակայունության կապը</p>	Վարդանուշ Պետրոսյան
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b> Ճարպակալման դասակարգում իր բարդություններով</p>	Վարդանուշ Պետրոսյան
<b>Օր 5</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b> <b>Էթիոպաթոգենեզ (մաս 4)</b> <b>Հոգեբանական գործոններ</b> Սննդային վարքագծային խանգարումներ: Դրանց հոգեբանական մեխանիզմները <b>Մանկական</b> Մանկական ճարպակալումը որպես քաշի և առողջության երկարաժամկետ մարտահրավերներ:</p>	Վարդանուշ Պետրոսյան

	<p><b>Սոցիալ-տնտեսական-մշակույթային գործոններ</b>  Հասարակական նորմեր և մարմնի ընկալում, խարան և խտրականություն. սոցիալական աջակցություն:  ԶԼՄ-ներ և գովազդ. մշակույթային սննդային պրակտիկաներ:  Սննդի մատչելիություն և հասանելիություն, առողջ ապրելակերպի արժեքը</p>	
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b>  Սննդային գովազդի վերլուծություն</p>	Վարդանուշ Պետրոսյան
<b>Շաբաթ 2</b>		
<b>Օր 1</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b>  <b>Պացիենտի հետ մոտիվացիոն հարցազրույց</b>  Վարքագծային փոփոխությունը խթանելու ռազմավարությունները մոտիվացիոն հարցազրույցի ժամանակ:  <b>Ճարպակալման հոգեւոցիալական ասպեկտները</b>  Ճարպակալման հոգեբանական և էմոցիոնալ մարտահրավերները՝ կարեկցող և աջակցող խնամքի ռազմավարությունները որպես այս պացիենտների վարման հիմնաքար:  <b>Մշակույթային հավասարություն</b> մշակույթային զգայունության և իրավահավասարության տարբերությունը տարբեր մշակույթներում</p>	Վարդանուշ Պետրոսյան
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b>  Դերային աշխատանք</p>	Վարդանուշ Պետրոսյան
<b>Օր 2</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b>  <b>Բուժում (մաս 1)</b>  Առողջ սնուցման հինական սկզբունքները ափսե և սննդահեն ուղեցույցները:  Ճարպակալման բուժմանն ուղղված սննդակարգեր:  Անհատականացված սննդային խորհրդատվություն հիվանդներին, հիմնական սկզբունքները</p>	Վարդանուշ Պետրոսյան
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b>  Առողջ ափսեի մշակում նախաճաշի, ճաշի և ընթրիքի համար, սննդի պլանավորում</p>	Վարդանուշ Պետրոսյան
<b>Օր 3</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b>  <b>Բուժում (մաս 2)</b>  <b>Դեղորայքային բուժում</b>  Դեղորայքային բուժման անցյալը, ներկան և ապագան. Ներկա դեղամիջոցների գործողության մեխանիզմները, ցուցումները, հակացուցումները և հնարավոր կողմնակի ազդեցությունները:  <b>Բարիատրիկ վիրաբուժություն</b>  Բարիատրիկ վիրաբուժության տարբեր տեսակները, հիվանդների ընտրության չափանիշներն ու ռիսկերը՝ կապված վիրաբուժական միջամտությունների հետ:  Follow up սնուցման ռազմավարությունը</p>	Վարդանուշ Պետրոսյան
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b>  Ճարպակալման դեպքերի վարման այգորիթմի մշակում</p>	Վարդանուշ Պետրոսյան

<b>Օր 4</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b>  <b>Քուժում (մաս 3)</b>          Սննդային վարքագծային խանգարումների հոգեբանական կարգավորման հիմնական սկզբունքները:  <b>Քաշի երկարատև կառավարում</b>, հիմնական սկզբունքները:  <b>Բջջային հավելվածներ</b>՝ այս պացիենտների վարքագծային աջակցության համար</p>	Վարդանուշ Պետրոսյան
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b>          Վարքագծային հարցաշարի լրացում և քննարկում</p>	Վարդանուշ Պետրոսյան
<b>Օր 5</b>		
2 ժամ	<p><b>Դասախոսություն</b>  <b>Միջառարկայական խնամք և ուղղորդումներ</b>          Այլ առողջապահական մասնագետների հետ համագործակցությունը՝ այս հիվանդներին համապարփակ օգնություն տրամադրելու համար:  <b>Քաղաքականություն և համայնքային միջամտություններ</b>          Առաջնային բուժաշխատողների դերը խնդրի հետ կապված քաղաքականության փոփոխությունների և համայնքի վրա հիմնված միջամտությունների քարոզչության մեջ՝ առողջ ապրելակերպը խթանելու համար:  <b>Կանխարգելման ռազմավարություններ.</b>          կանխարգելիչ մոտեցումները և վաղ միջամտության մեթոդները՝ համայնքում ճարպակալման ռեպերը նվազեցնելու համար</p>	Վարդանուշ Պետրոսյան
1 ժամ	<p><b>Գործնական աշխատանք</b>          Սեփական միջավայրում կանխարգելիչ միջամտությունների պլանի ստեղծում</p>	Վարդանուշ Պետրոսյան